



Բազմակողմանի
տեղեկատվության ինստիտուտ

Արհեստական բանականության գործիքների կիրառումը ՀՀ պետական մարմիններում

Քաղաքականության փաստաթուղթ (Policy Paper)

Գեորգ Հայրապետյան

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Դեկտեմբեր, 2025

1. Ներածություն

Այս փաստաթուղթը մշակվել է «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից իրականացվող «CyberHUB-AM. սպառնալիքների լաբարատորիա՝ հայաստանյան բաղադրարկական հասարակության համար» ծրագրի շրջանակներում:

1.1. Ուսումնասիրության մասին ընդհանուր տեղեկություններ

Այս փաստաթղթի նպատակն է ուսումնասիրություններով եւ հարցումներով բացահայտել Հայաստանում հանրային ոլորտում արհեստական բանականության (ԱԲ) գործիքների կիրառման պրակտիկան եւ կարգավորումները, ինչպես նաեւ գնահատել ԱԲ կիրառման կարգավորման անհրաժեշտությունը եւ ներկայացնել համապատասխան խորհրդատվականներ:

Հայաստանում հանրային ոլորտում ԱԲ գործիքների կիրառման պրակտիկան եւ կարգավորումները բացահայտելու համար տեղեկություն ստանալու հարցումներ են ուղարկվել ՀՀ բոլոր նախարարություններին, կառավարությանը ենթակա մարմիններին, ինչպես նաեւ պետական անկախ մարմիններին (բոլորը միասին այսուհետ՝ պետական մարմիններ): Տեղեկություն ստանալու հաջամբ ակնկալվել է հետեւյալ երկու հարցի պատասխանը՝

- Արդյոք պետական մարմնի գործառույթների իրականացման, այդ թվում՝ ծառայությունների մատուցման շրջանակներում կիրառվում են արհեստական բանականության գործիքներ:
- Եթե այո, ապա ո՞ր օրենքով սահմանված նպատակներով կամ հիմքով եւ ո՞ր գործառույթի կամ ծառայության համար ԱԲ ի՞նչ գործիք է կիրառվում:

Հարցումը, եւ ըստ այդմ նաեւ այս ուսումնասիրությունը, չի վերաբերել պետական մարմնի աշխատողների կողմից ամենօրյա աշխատանքում ԱԲ գործիքների (օրինակ, այնպիսի լեզվական/լեզվական մեծ մոդելների (LM/LLM), ինչպիսիք են ChatGPT-ն, Gemini-ն և այլն) հնարավոր կիրառմանը, այլ վերաբերել է ԱԲ այնպիսի գործիքների, որոնք հանդիսանում են գործառույթի/ծառայության կամ տնօրինվող տեղեկատվական համակարգի բաղադրիչ կամ կազմում են էլեկտրոնային ծառայության կամ տեղեկատվական համակարգի ճարտարապետության մաս:

Հաշվի առնելով, որ ներպետական օրենսդրությունում չենք կարողացել գտնել ԱԲ եզրույթի հասկացություն՝ ԱԲ ներքո նկատի ենք ունեցել եւ այս փաստաթղթում էլ նկատի ունենք այնպիսի գործիքներ, որոնք համադրելի են.

- «Արհեստական բանականության եւ մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության մասին» Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիայի հասկացությանը – մեքենայահեն համակարգ, որը՝ որոշակի կամ անորոշ նպատակներով եզրակացություններ է անում, թե ինչպես իրեն տրամադրված մուտքային տվյալներից ստեղծել ելքային այնպիսի արդյունքներ, ինչպիսիք են կանխատեսումները, բովանդակությունը, խորհրդատվականները կամ որոշումները, որոնք կարող են ազդել ֆիզիկական կամ վիրտուալ միջավայրերի վրա,
- ընդհանուր հասկացությանը – համակարգիչների եւ ծրագրերի համակարգ, որն ընդունակ է կատարել այնպիսի առաջադրանքներ, որոնք սովորաբար պահանջում են մարդկային ինտելեկտ, ինչպես օրինակ՝ սովորել, տրամաբանել, հասկանալ խոսք եւ լուծել խնդիրներ:

1.2. ԱԲ գործիքների կիրառման ռիսկը

Պետական մարմինների կողմից ԱԲ գործիքների կիրառման ռիսկն այս փաստաթղթում համադրվել է հիմնականում անձնական տվյալների մշակման կանոնների հետ՝ հետեւյալ պատճառներով.

Պատճառ 1 – Պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունները կամ գործառույթները որպես կանոն եւ հաճախ կապված են մարդկանց իրավունքների, պարտականությունների, իրավունքների սահմանափակման, պատասխանատվության, ինչպես նաեւ մարդկանց համար որեւէ կերպ իրավական հետեւանք առաջացնող որոշումների կայացման հետ: Նման գործողություններն անխուսափելիորեն ենթադրում են անձնական տվյալների մշակում: Մասնավորապես, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաեւ՝ ԱՏՊ օրենք) համաձայն՝ անձնական տվյալների հետ կատարվող ցանկացած գործողություն, որի ուղղակի կամ անուղղակի նպատակը կարող է լինել որոշումներ ընդունելը կամ ցանկացած այլ նպատակի իրագործումը, որոնք տվյալների սուբյեկտի կամ երրորդ անձանց համար առաջացնում կամ կարող են առաջացնել իրավական հետեւանքներ կամ այլ կերպ առնչվել նրանց իրավունքներին ու ազատություններին, համարվում է անձնական տվյալի օգտագործում, որն իր հերթին համարվում է անձնական տվյալի մշակում:¹ Արդյունքում, պետական մարմնի գործառույթներում կամ մատուցվող ծառայություններում կիրառվող ԱԲ գործիքները հաճախ կարող են օգտագործվել անձնական տվյալների մշակման համատեքստում:

¹ Տեւ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենք, 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետեր:

Պատճառ 2 – Անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքը պահանջում է, որ անձնական տվյալները մշակվեն օրենքի պահանջների պահպանմամբ:² Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինն իր որոշումներում անդրադարձել է տվյալների մշակման այս կանոնին՝ նշելով, որ անգամ այն դեպքերում, երբ տվյալներ մշակողն ունի տվյալների մշակման իրավական հիմք (տվյալներ մշակելու իրավունք), միեւնույն է պարտավոր է նաեւ հետեւել եւ ապահովել, որ տվյալները մշակվեն այնպես եւ այն ձեւով ու պայմաններով, ինչպես սահմանված է օրենքներով: Արդյունքում, եթե օրենքով սահմանված չէ, որ այս կամ այն դեպքում անձնական տվյալները կարող են մշակվել ԱԲ գործիքներով, ապա տվյալների մշակման նման ձեւը խնդրահարույց կլինի տվյալների մշակման օրինականության սկզբունքի տեսանկյունից:

Պատճառ 3 – ԱԲ գործիքների կիրառման դեպքում տվյալների մշակման օրինականության սկզբունքի պահպանումը ոչ թե ձեւական պահանջ է, այլ մարդու իրավունքների ապահովման երաշխիք: ԱՏՊ լիազոր մարմինն իր որոշումներում նշել է, որ ԱՏՊ օրենքը չի պարտադրում անձնական տվյալների մշակման այս կամ այն ձեւը, չի արգելում կոնկրետ դեպքում անձնական տվյալների մշակման համար այս կամ այն միջոցն օգտագործելը, սակայն եթե տվյալների մշակման ձեւի փոփոխությունը հանգեցնում է նաեւ տվյալների մշակման բովանդակության որեւէ փոփոխության, ապա անհրաժեշտ է, որ տվյալների մշակման ձեւի փոփոխության արդյունքում տվյալների մշակումը համապատասխանեցվի անձնական տվյալների մշակման սկզբունքներին եւ կանոններին: Այսպես, անձնական տվյալների մշակման դեպքում տվյալներ մշակող պետական մարմինը կարող է տարբեր գործիքներ կիրառել՝ թուղթ, համակարգիչ, հեռախոս եւ այլն, եւ անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքը չի պահանջում յուրաքանչյուր դեպքում օրենքներով մանրամասնորեն նշել տվյալների մշակման համար կիրառվող սարքերն ու գործիքները՝ ընդհուպ մինչեւ դրանց ապրանքանիշը, գույնը եւ այլն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ որոշ դեպքերում անձնական տվյալների մշակման ձեւի փոփոխությունը հանգեցնում է նաեւ տվյալների մշակման պայմանների եւ առանձնահատկությունների փոփոխության: Այսպես.

- Առանց ԱԲ գործիքների տվյալների մշակումը սովորաբար սահմանափակվում է կոնկրետ գործողությամբ կամ որոշմամբ, որը կայացվում է մարդու կողմից եւ ենթակա է պարզ հետադարձ վերահսկողության/բողոքարկման: Այնինչ, ԱԲ գործիքներով տվյալների մշակումը հաճախ ենթադրում է մեծ ծավալի տվյալների վերլուծություն, ինչն պատշաճ կարգավորման եւ վերահսկողության բացակայության դեպքում կարող է հանգեցնել մարդկանց տարբեր իրավունքների ոտնահարման,

² Տեւ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենք, 4-րդ հոդվածի 1-ին մաս:

- Առանց ԱԲ գործիքների տվյալների մշակման դեպքում որոշումների տրամաբանությունը, որպես կանոն, պարզ է, բացատրելի եւ վերահսկելի առնվազն այնքանով, որքանով վարչարարություն իրականացնող մարմինը/պաշտոնյան պետք է կամ կարող է ներկայացնել այս կամ այն որոշման ընդունման փաստարկները կամ բացատրել որոշման հիմքում ընկած հանգամանքները: Այնինչ, ԱԲ գործիքներով որոշումները կարող են ընդունվել «սեւ արկղի» տրամաբանությամբ, երբ որոշման հասցեատիրոջը պարզ չի լինում, թե ի՞նչ հանգամանքների հիման վրա եւ ի՞նչ փաստարկներով ու չափանիշներով է իր վերաբերյալ որոշում կայացվել: Սա արդեն վտանգում է յուրաքանչյուրի՝ իր իրավունքների եւ ազատությունների արդյունավետ իրավական պաշտպանության, այդ թվում՝ պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքը:
- Առանց ԱԲ գործիքների տվյալների մշակման ժամանակ սխալները սովորաբար ունեն անհատական բնույթ եւ կարող են արագ հայտնաբերվել ու ուղղվել պետական մարմնի նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի/բողոքի հիման վրա: Այնինչ, ԱԲ գործիքների հայուցինացիաները կամ սխալ եզրահանգումները կարող են ազդել միաժամանակ մեծ թվով անձանց վրա՝ առանց ակնհայտ նշանների, որ տեղի է ունենում տվյալների սխալ մշակում:
- Առանց ԱԲ գործիքների տվյալների մշակումն ենթադրում է, որ մարդը (իրավասու պաշտոնյան) շարունակում է մնալ հիմնական որոշում կայացնողը: Այնինչ ԱԲ գործիքների կիրառմամբ տվյալների մշակումը համապատասխան կարգավորումների բացակայության դեպքում կարող է հանգեցնել լիովին կամ մասամբ ավտոմատացված որոշումների՝ առանց արդյունավետ մարդկային վերահսկողության, ինչը ստեղծում է մարդու տարբեր իրավունքներին անհամաչափ միջամտության ռիսկեր:
- Տվյալների մշակման օրինականության սկզբունքը պահանջում է, որ անձնական տվյալների մշակումն ունենա որոշակի (կոնկրետ) նպատակ,³ իսկ այդ նպատակին հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ եւ չափավոր: Ի տարբերություն առանց ԱԲ գործիքների տվյալների մշակման՝ ԱԲ գործիքներով անձնական տվյալների մշակումը ստեղծում է տվյալներն ավելի շատ եւ նոր նպատակներով մշակելու հնարավորություն, ինչը պատշաճ կարգավորման բացակայության պայմաններում կարող է դուրս գալ տվյալների մշակման սկզբնական նպատակների սահմաններից:

Վերելի օրինակները ցույց են տալիս, որ ԱԲ գործիքների կիրառումը տվյալների մշակման պարզապես տեխնիկական միջոցի փոփոխություն չէ: ԱԲ կիրառմամբ տվյալների մշակումը

³ Տե՛ս՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենք, 4-րդ հոդվածի 2-րդ մաս:

իր բնույթով տարբերվում է տվյալների առանց ԱԲ իրականացվող մշակումից՝ առաջացնելով նոր ռիսկեր մարդու տարբեր իրավունքների համար, ոչ միայն անձնական տվյալների պաշտպանության, այլ նաև անձնական ու ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, խտրականության արգելքի, արդյունավետ իրավական պաշտպանության եւ այլ իրավունքների տեսանկյունից: Հետեւաբար, նույնիսկ այն դեպքերում, երբ պետական մարմինը ի սկզբանե ունի անձնական տվյալներ մշակելու իրավասություն, տվյալների մշակման իրականացումը ԱԲ միջոցով պետք է հստակ նախատեսված լինի եւ կարգավորվի վերաբերելի օրենքներով:

2. Համատեքստը/առիթը

2.1. Հայաստանին վերաբերելի միջազգային համատեքստը

2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2063-Ա որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության մասին» Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիայի⁴ (այսուհետ նաեւ՝ ԱԲ կոնվենցիա) ստորագրման առաջարկությանը:

ԱԲ կոնվենցիան իր տեսակի մեջ առաջին ընդհանուր եւ իրավաբանորեն պարտադիր (legally binding) փաստաթուղթն է, որի նպատակն է ապահովել ԱԲ կիրառման համապատասխանությունը մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության ընդհանուր չափանիշներին, ինչպես նաեւ նվազեցնել այդ իրավունքների եւ սկզբունքների խաթարման ռիսկերը:⁵ ԱԲ կոնվենցիան ընդունվել է 2024 թվականի մայիսի 17-ին եւ ստորագրությունների համար բացվել 2024 թվականի սեպտեմբերի 5-ին:⁶

Հատկանշական է, որ ԱԲ կոնվենցիան, հաշվի առնելով իր բարձր մակարդակի կարգավորման բնույթը, չի կարգավորում կոնկրետ տեխնոլոգիաներ եւ ըստ էության տեխնոլոգիապես չեզոք է: Փոխարենը, վերաբերելով ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հատվածներին՝ ԱԲ կոնվենցիան պահանջում է, որ ԱԲ համակարգերի կյանքի ցիկլում (lifecycle) իրականացվող բոլոր գործողությունները համապատասխանեն այնպիսի հիմնական սկզբունքների, ինչպիսիք են մարդու արժանապատվությունը եւ անհատի ինքնավարությունը, հավասարությունը եւ խտրականության արգելքը, ինչպես նաեւ գաղտնիությունը (անձնական կյանքի անձեռնմխելիությունը՝ privacy) եւ անձնական տվյալների պաշտպանությունը:⁷

ԱԲ կոնվենցիան բաց է ինչպես Եվրոպայի խորհրդի անդամ, այնպես էլ ոչ անդամ պետությունների համար: Ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է, որ կոնվենցիան վավերացնի առնվազն հինգ պետություն, որոնցից առնվազն երեքը կլինեն Եվրոպայի խորհրդի անդամ:⁸ Քաղաքականության այս փաստաթուղթը մշակելու պահին (2025 թվականի դեկտեմբերին) ԱԲ կոնվենցիան դեռ ուժի մեջ չի մտել:

⁴ Տես՝ <https://rm.coe.int/1680afae3c>

⁵ Տես՝ https://www.coe.int/en/web/artificial-intelligence/home?utm_source=chatgpt.com

⁶ Տես՝ https://www.coe.int/en/web/artificial-intelligence/the-framework-convention-on-artificial-intelligence?utm_source=chatgpt.com եւ https://rm.coe.int/20240704-ecm-9-2024-webinar-presentation-framework-convention-on-ai/1680b0d26d?utm_source=chatgpt.com

⁷ Տես՝ https://rm.coe.int/20240704-ecm-9-2024-webinar-presentation-framework-convention-on-ai/1680b0d26d?utm_source=chatgpt.com

⁸ Տես՝ <https://rm.coe.int/1680afae3c>, հոդված 30, մաս 2

2.2. Ներպետական համատեքստը

2025 թվականի հունվարի 13-14-ին հայաստանյան մի քանի առցանց լրատվամիջոցներ, հղում անելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության (ԲՏԱ) նախարարին՝ հայտնեցին, որ Հայաստանում քննարկվում է ԱԲ գործիքները պետական գնումների համակարգում կիրառելու հարցը:⁹

2025 թվականի մայիսի 13-ին Սրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (ՄՄՇՊՀ) տեղեկություն հրապարակեց այն մասին, որ հանձնաժողովը ֆինանսների նախարարության հետ համագործակցությամբ մշակում է ԱԲ գործիքների ներդրմամբ պետական գնումներում հակամրցակցային համաձայնությունների բացահայտման թվային համակարգ: Ըստ հրապարակման, այդ մասին հայտնել է հանձնաժողովի նախագահը՝ Սրցակցության միջազգային ցանցի (ICN) տարեկան համաժողովին:¹⁰

2025 թվականի փետրվարի 10-ին Փարիզում, ԲՏԱ նախարարության եւ ԱԲ բնագավառի ֆրանսիական «Mistral AI» ընկերության միջեւ համաձայնագիր է ստորագրվել, որով սահմանվող համագործակցությամբ, ըստ հրապարակված տեղեկության, նախատեսվում է բարելավել Հայաստանում ԱԲ ենթակառուցվածքները եւ նաեւ բարելավել հանրային կառավարումը ԱԲ հիմքով գործող GovTech ծրագրի միջոցով:¹¹

2025 թվականի մայիսի 14-ին ԲՏԱ նախարարի տեղակալ Գեորգ Մանթաշյանի գլխավորությամբ եւ նախարարության հրավերով Հայաստան ժամանած «Mistral AI» ընկերության ներկայացուցիչների, ՀՀ պետական մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների ու ոլորտի այլ ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել «Արհեստական բանականությունը՝ հանրային կառավարման փոխակերպման համար» թեմայով աշխատաժողով:

⁹ Տե՛ս՝ <https://tech.news.am/arm/news/4941/hayastanum-mtatsum-en-arhestakan-banakanutyuny-petakan-gnumneri-hamakarg-mtcnelu-masin-inch-e-sa-nshanakum-ev-inchpisi-storjrya-khuter-kan.html>, <https://iravunk.com/?p=302746&l=am> եւ <https://top-news.am/article/151858/am>

¹⁰ Տե՛ս՝ <https://competition.am/hy/2025/05/13/%d5%a3%d5%a5%d5%b2%d5%a1%d5%b4-%d5%a3%d6%87%d5%b8%d6%80%d5%a3%d5%b5%d5%a1%d5%b6%d5%a8-icn-%d5%ab-%d5%bf%d5%a1%d6%80%d5%a5%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a1%d5%aa%d5%b8%d5%b2%d5%b8%d5%be%d5%ab/>

¹¹ Տե՛ս՝ <https://hightech.gov.am/hy/tegekatvakan-kentron/ay/norutyunner/mistral-ai-visit-to-ministry>

Աշխատաժողովի ընթացքում ի թիվս այլնի քննարկվել է հենց պետական մարմինների գործառնություններում ԱԲ գործիքների կիրառումը, մասնավորապես անդրադարձ է կատարվել՝

- ԱԲ-ի ազդեցությանը կառավարության գործունեության եւ քաղաքացիական ծառայությունների վրա,
- ԱԲ կիրառության միջոցով հանրային հատվածում խարդախության, գնումների եւ ֆինանսական գործարքների անտմալիաների հայտնաբերմանը,
- ԱԲ մեխանիզմներով խելացի կառավարմանն ու տվյալների վերլուծությանը,
- ԱԲ կիրառմամբ՝ արդարադատությանը, առողջապահական եւ սոցիալական ծառայություններին աջակցման եւ բարելավելավման մեխանիզմներին:¹²

2025 թվականի հունիսի 26-ին Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում ընթացող Համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակում ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը մասնակցել է «Արհեստական բանականությունը, ավտոմատացումը եւ աշխատանքի ապագան» թեմայով պանելային քննարկմանը, ի թիվս այլնի ներկայացրել աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտում արհեստական բանականության գործիքների կիրառմամբ իրականացվող նախաձեռնությունները, եւ նշել՝ «Արհեստական բանականության կիրառմամբ՝ մենք փորձում ենք փոխել խոցելի խմբերին ճանաչելու եւ աջակցելու ձեւը: Ներդրված համակարգը վերլուծում է համապարփակ տվյալներ՝ ժողովրդագրության, զբաղվածության, առողջության եւ կրթության ոլորտներից՝ խոցելի խմբերին բացահայտելու եւ սոցիալական ռիսկեր կանխատեսելու նպատակով՝ նախքան դրանց ի հայտ գալը (...):»¹³

Ըստ հրապարակված տեղեկությունների՝ նախարարն իր խոսքում նշել էր, որ Հայաստանն առաջին երկրներից է, որն արհեստական բանականությունն ամբողջությամբ ներդրել է սոցիալական պաշտպանության համակարգում:¹⁴ Կարելու է նշել, որ սոցիալական պաշտպանության ոլորտում արհեստական բանականության գործիքների կիրառման մասին հրապարակումներ կան դեռեւս 2022 թվականից, երբ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացվել էր «Արհեստական բանականությունը սոցիալական պաշտպանության ոլորտում» հետազոտական նախագիծը:¹⁵

2025 թվականի նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 9-ը հանրային քննարկման է դրվել արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական

¹² Տե՛ս՝ <https://hightech.gov.am/hy/tegekatvakan-kentron/ayl/norutyunner/mistral-ai-visit-to-ministry>

¹³ Տե՛ս՝ <https://www.mlsa.am/news/965>

¹⁴ Տե՛ս՝ <https://shorturl.at/YHW2E>

¹⁵ Տե՛ս՝ <https://www.aravot.am/2022/10/26/1300377/>

ռեսուրսներին (High-performance computing – HPC) հասանելիության ապահովման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը,¹⁶ որով նախատեսվում է ԱԲ ոլորտի նորարարների (ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերի, իրավաբանական անձանց) համար ապահովել բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներին անվճար հասանելիություն:

Ըստ նախագծի հիմնավորման՝ Հայաստանում գործող արհեստական բանականության ոլորտի ստարտափները, հետազոտական խմբերը, ուսումնական հաստատություններն ու անհատ մասնագետները ներկայում չունեն բավարար հասանելիություն նման ռեսուրսների՝ հաշվարկային հզորության եւ պահուստավորման տեսանկյունից, ինչը խոչընդոտում է գաղափարների ամբողջական իրագործումը: Ըստ այդմ, հիմնավորվում է, որ պետական ֆինանսավորմամբ CPU/GPU ռեսուրսների տրամադրումը արհեստական բանականության ոլորտի նորարարներին ոչ միայն տեխնիկական քայլ է, այլեւ ռազմավարական ընտրություն, որի նպատակն է տեխնոլոգիական առաջընթացից բխող բարեկեցությունն ուղղորդել ներառական աճի:

¹⁶ Տե՛ս՝ <http://e-draft.am/projects/9424>

3. Հարցումների/ուսումնասիրության արդյունքները

Ուսումնասիրության շրջանակներում հարցում ուղարկվել է ընդհանուր առմամբ 32 պետական մարմնի:¹⁷ Քաղաքականության այս փաստաթուղթը նախապատրաստելու պահին՝ հարցումներն ուղարկելուց ավելի քան մեկ ամիս անց, պատասխան չի ստացվել Պաշտպանության նախարարություններից եւ Կենտրոնական բանկից:

Մնացած բոլոր պետական մարմինները հարցմանը պատասխանել են ըստ էության, իսկ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանն ուղղված հարցմանը ստացվել է երկու պատասխան՝ ինչպես նախարարությունից, այնպես էլ Լեզվի կոմիտեից:

Ըստ ստացված պատասխանների՝ ստորեւ պետական մարմինների կողմից ԱԲ գործիքների կիրառման պրակտիկան է: Ներկայացված են միայն այն պետական մարմինների պատասխանները, որոնք հայտնել են կամ որոնց դեպքում առկա է եղել հանրամատչելի տեղեկություն ԱԲ գործիքների կիրառման կամ կիրառման մտադրության մասին: Առանձին ներկայացված է նաեւ ԲՏԱ նախարարության պատասխանը, որը վերաբերում է Հայաստանում ԱԲ կենտրոնի ստեղծմանը եւ այդ շրջանակում նախատեսվող միջոցառումներին:

➤ **Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն – պատասխանը.** *նախարարության տեղեկատվական համակարգերում ներկայումս արհեստական բանականության (AI) բաղադրիչներ չեն կիրառվում: Գործարկվող գործառույթների շրջանակում առկա են որոշ ավտոմատացված մեխանիզմներ, որոնք ձեւավորվում են նախապես սահմանված տրամաբանությունների եւ ալգորիթմների հիման վրա եւ չեն իրականացվում ինքնուրույն վերլուծական կամ որոշում կայացնող AI համակարգերի կողմից: Նշված ավտոմատացումները տեխնիկական են եւ չեն համարվում AI կիրառություն:*

Ինչպես ներկայացվել է այս փաստաթղթի 2-րդ բաժնի 2.2 ենթաբաժնում՝ առկա է հանրամատչելի պաշտոնական տեղեկություն այն մասին, որ սոցիալական պաշտպանության համակարգում ներդրված են ու կիրառվում են ԱԲ գործիքներ: Ընդ որում, սոցիալական պաշտպանության ոլորտում շահառուների կարիքի առավել ընդարձակ ու թիրախային գնահատման, արագ արձագանքման եւ աջակցության

¹⁷ Պետական մարմինների ցանկը, էլեկտրոնային հարցումների միասնական e-request.am կայքում հարցման ընթացքը ներկայացնող հղումը եւ պատասխանների հակիրճ բովանդակությունը ներկայացված են Հավելվածով

հատկացման համակարգերում ԱԲ գործիքների կիրառման մասին տեղեկությունները առկա են դեռևս 2022 թվականից: Եվ ավելին, սոցիալական պաշտպանության համակարգում ԱԲ գործիքներ կիրառելու վերաբերյալ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը հայտարարել է հանրային միջոցառումների ընթացքում: Արդյունքում, ԱԲ գործիքների կիրառման վերաբերյալ ԱՍՀՆ կողմից ներկայացված պաշտոնական տեղեկությունները (մի կողմից հրապարակված նյութերն ու նախարարի հայտարարությունները, մյուս կողմից ԱՍՀՆ ներկայացված հարցման պատասխանը) տառացիորեն իրար հակասում են:

Սոցիալական պաշտպանության ոլորտն առերեսույթ ենթադրում է անձնական տվյալների մշակում առնվազն սոցիալական պաշտպանության՝ քաղաքականությունների եւ ծրագրերի շահառուների մասով: Միաժամանակ, վերաբերելի օրենսդրությունում¹⁸ չենք կարողացել գտնել ԱԲ կիրառման վերաբերյալ որեւէ դրույթ:

➤ **Արդարադատության նախարարություն – պատասխանը.** *նախարարության եւ ենթակա մարմինների գործառույթների իրականացման, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների շրջանակներում, դիտարկվում են ԱԲ գործիքների կիրառման հնարավորությունը: Նախարարությունում ընթանում են քննարկումներ՝ ուղղված ԱԲ գործիքների կիրառման նպատակահարմարության, իրավական հիմքերի եւ տվյալների պաշտպանության պահանջների գնահատմանը: Այդ նպատակով ուսումնասիրվում են միջազգային փորձը, ինչպես նաեւ ԵՄ եւ այլ գործընկեր երկրների կիրառվող մոտեցումները:*

Նախարարությունը չի հստակեցրել, թե որ ծառայությունների շրջանակում է դիտարկվում ԱԲ գործիքների կիրառման հնարավորությունը, սակայն էական է, որ առնվազն այս փուլում խոսք է գնում նման գործիքների կիրառման նպատակահարմարության, ինչպես նաեւ իրավական հիմքերի ու տվյալների պաշտպանության պահանջների գնահատման մասին: Ամեն դեպքում, նախարարության եւ ենթակա մարմինների գործառույթները կարգավորող օրենսդրությունում¹⁹ չենք կարողացել գտնել ԱԲ կիրառման վերաբերյալ որեւէ դրույթ:

¹⁸ Օրինակ, «Սոցիալական աջակցության մասին», «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքներում, Աշխատանքային օրենսգրքում:

¹⁹ Օրինակ, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» եւ «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Մնականության մասին», «Նոտարիատի մասին» օրենքներում:

➤ **Էկոնոմիկայի նախարարություն – պատասխանը.** գյուղատնտեսական ոլորտի տնտեսական զարգացման միջոցառումների շրջանակներում ArcGIS Enterprise միջավայրում մշակվող եւ տեղադրվող քարտեզագրական նյութերի ստեղծման գործընթացքում կիրառվում են ԱԲ եւ մեքենայական ուսուցման հիմնված՝ արբանյակային եւ անօդաչու թռչող սարքերից ստացվող բազմասպեկտրալ հանրույթների վերլուծական գործիքներ:

Էկոնոմիկայի նախարարությունն իր պատասխանում նշել էր, որ քարտեզագրական նյութերը մշակվում եւ տեղադրվում են գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը եւ դրա կատարմանն ուղղված միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության՝ 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ եւ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարության՝ 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման վերաբերելի կետերի կատարումն ապահովելու նպատակով: Նշված երկու ենթաօրենսդրական ակտերում չենք կարողացել գտնել ԱԲ կիրառման վերաբերյալ որեւէ դրույթ:

Այդուհանդերձ պետք է նշել, որ Էկոնոմիկայի նախարարության նշած ԱԲ գործիքները, առերեսույթ, անձնական տվյալների մշակում չեն ենթադրում եւ ըստ այդմ, չունեն մարդու իրավունքներին միջամտելու ակնհայտ (առերեսույթ) ռիսկ, ըստ այդմ այդ գործիքների կիրառությունը չի կարող գնահատվել անձնական տվյալների մշակման սկզբունքների տեսանկյունից:

➤ **Առողջապահության նախարարություն – պատասխանը.** պաշտոնապես չի կիրառում որեւէ ԱԲ վրա հիմնված տեխնոլոգիա:

Առողջապահության նախարարությունը նշել է ԱԲ գործիքներ պաշտոնապես չկիրառելու մասին: Սակայն, Էլեկտրոնային առողջապահության համակարգի Armed eHealth հավելվածում կա Dr. Lex անձնական առողջության օգնականը, որն, ըստ էության AI bot է, գործում է նաեւ որպես առանձին հավելված է, որտեղ կարելի է գրանցվել Armed-ի միջոցով: Այս հավելվածի գաղտնիության քաղաքականությունում (անգլերեն) նշվում է, որ այն գործարկվում է Dr. Lex AI Inc. (<https://www.drlex.ai/drlex/aboutus>) կողմից:

Ստացվում է, որ թեւէ Առողջապահության նախարարությունը պաշտոնապես չի կիրառում ԱԲ գործիքներ, սակայն մի կողմից Էլեկտրոնային առողջապահության համակարգում առկա է մասնավոր ընկերության կողմից կիրառվող ԱԲ գործիք, որն առերեսույթ հասանելիության հնարավորություն ունի պացիենտների տվյալներին, ինչպես նաեւ որով

մշակվում են պացիենտների առնվազն այն տվյալները, որոնցով Armed-ի օգտատերը հաղորդակցվում է bot-ի հետ/միջոցով: Մյուս կողմից ԱԲ կիրառման վերաբերյալ որեւէ դրույթ չենք կարողացել գտնել «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում:

➤ **Պետական եկամուտների կոմիտե (ՊԵԿ) – պատասխանք.** *կիրառվում է ԱԲ տարրերով համակարգ, որը հանդիսանում է բացառապես ներքին օգտագործման գործիք եւ կիրառվում է հարկ վճարողների ռիսկայինությունը որոշելու համար:*

Պետական եկամուտների կոմիտեն չի հստակեցրել, թե ո՞ր օրենքով սահմանված նպատակներով կամ հիմքով է կիրառում ԱԲ գործիքը: Նաեւ, ԱԲ կիրառման վերաբերյալ որեւէ դրույթ չենք կարողացել գտնել Հարկային օրենսգրքում: Այնինչ, ՊԵԿ-ի կողմից նշած ԱԲ կիրառումը ենթադրում է հարկ վճարողների անձնական տվյալների մշակում:²⁰

➤ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ) – պատասխանք.** *ԱԲ գործիքներ չեն կիրառում, միաժամանակ, ԿԿՀ-ն նախատեսում է ինտեգրել ԱԲ գործիքներ ԿԿՀ-ի առնվազն երկու՝ նվերների հաշվառման ռեեստրի եւ հայտարարագրերի ավտոմատացված վերլուծության գործառույթներով:*

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հայտնել է ԱԲ գործիքների այնպիսի կիրառման մտադրության մասին, որը ենթադրում է հայտարարատու պաշտոնատար անձանց տվյալների մշակում: Թեւ տվյալ դեպքում խոսքը միայն մտադրության մասին է, սակայն վերաբերելի օրենսդրությունում²¹ չենք կարողացել գտնել ԱԲ կիրառման վերաբերյալ որեւէ դրույթ:

➤ **Ֆինանսների նախարարություն եւ Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով – պատասխանք.** *եւ նախարարությունը, եւ ՄՄՇՊՀ-ն հայտնել են, որ ԱԲ գործիքներ չեն կիրառում:*

Ինչպես ներկայացվել է այս փաստաթղթի 2-րդ բաժնի 2.2 ենթաբաժնում՝ ՄՄՇՊՀ-ն դեռեւս 2025 թվականի մայիսին տեղեկություն է հրապարակել այն մասին, որ ֆինանսների նախարարության հետ համագործակցությամբ մշակում են ԱԲ գործիքների ներդրմամբ պետական գնումներում հակամրցակցային համաձայնությունների բացահայտման թվային համակարգ: Ուստի, տվյալ դեպքում առկա է հանրամատչելի տեղեկություն գնումների

²⁰ Համապատասխան հիմնավորումը տես՝ այս փաստաթղթի 1-ին բաժնի 1.2 ենթաբաժնում:

²¹ Օրինակ, «Հանրային ծառայության մասին» եւ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքներում:

ոլորտում պետական մարմինների կողմից ԱԲ գործիքների կիրառման առնվազն մտադրության վերաբերյալ, անգամ եթե նման գործիքներ դեռևս չեն կիրառվում:

Պետական գնումներում հակամրցակցային համաձայնությունների բացահայտումն առերեսույթ ենթադրում է անձնական տվյալների մշակում առնվազն գնման գործընթացին մասնակցող ֆիզիկական անձանց մասով: Միաժամանակ, «Գնումների մասին» օրենքում չենք կարողացել գտնել ԱԲ կիրառման վերաբերյալ որեւէ դրույթ:

✓ **Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն** – Նախարարությունը հայտնել է, որ ԱԲ գործիքներ չեն կիրառում: Սակայն նախարարության պատասխանն էական է այնքանով, որքանով հայտնել են, որ Հայաստանում կկառուցվի մոտ 500 միլիոն դոլար արժողությամբ ԱԲ տվյալների կենտրոն: Firebird ընկերությունը NVIDIA-ի համագործակցությամբ եւ ՀՀ կառավարությունն աջակցությամբ մեկնարկել է համատեղ նախագիծ: Նախագծի շրջանակում նախատեսվում է տեղադրել հազարավոր «NVIDIA Blackwell GPU»-ներ, ձևավորել ավելի քան 100 մեգավատ հզորությամբ ենթակառուցվածք: Կենտրոնի գործարկումը նախատեսված է 2026 թվականին: 2025 թվականի հուլիսից մեկնարկել է Նախարարության ռազմավարական նախաձեռնությունը՝ «Վիրտուալ ԱԲ ինստիտուտ» (ai.gov.am), որը բաց հարթակ է նորարարության համար՝ նախատեսված միավորելու ԱԲ ոլորտի նորարարներին, տեխնոլոգիական ընկերություններին, հետազոտողներին, SS ստեղծագործողներին՝ խթանելով առաջատար հետազոտությունները, նորարարությունն ու արտադրանքի զարգացումը:

Ըստ նախարարության՝ նշված նախաձեռնությունները հնարավորություն կստեղծեն պետական կառավարման համակարգում, այդ թվում՝ պետական գերատեսչություններում եւ դրանց ենթակայության այլ մարմիններում (եւ ոչ միայն) ԱԲ-ի ավելի լայն կիրառման համար:

4. Եզրակացություններ եւ խորհրդատվականներ

Եզրակացություններ ԱԲ գործիքների կիրառման պրակտիկայի վերաբերյալ

Ըստ քաղաքականության այս փաստաթղթի հիմքում ընկած ուսումնասիրության եւ դրա՝ այս փաստաթղթով ներկայացված արդյունքների՝

1. Պետական մարմինների գործառույթների իրականացման, այդ թվում՝ ծառայությունների մատուցման շրջանակներում ԱԲ գործիքները համատարած չեն, սակայն առկա է դրանց կիրառման աճի միտում, այդ թվում՝

- Էկոնոմիկայի նախարարությունը, Պետական եկամուտների կոմիտեն, ինչպես նաեւ Առողջապահության նախարարությունը (ոչ պաշտոնապես) կիրառում են ԱԲ գործիքներ,
- Արդարադատության նախարարությունը, ԿԿՀ-ը, Ֆինանսների նախարարություն եւ ՄՄՇՊՀ-ն (վերջին երկուսն՝ ըստ հանրամատչելի տեղեկությունների) քննարկում են ԱԲ գործիքների կիրառումը,
- ԲՏԱ նախարարությունը հայտնել է այնպիսի նախաձեռնությունների, մասին, որոնք միտված են ի թիվս այլնի նաեւ պետական կառավարման համակարգում, այդ թվում՝ պետական գերատեսչություններում եւ դրանց ենթակայության այլ մարմիններում (եւ ոչ միայն) ԱԲ-ի ավելի լայն կիրառման համար հնարավորությունների ստեղծմանը:

2. Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության դեպքում ԱԲ գործիքների կիրառման մասին հանրային հաղորդակցությունը պատշաճ չէ: Մասնավորապես, նախարարությունը հրապարակային հայտարարություններով հայտնել է ԱԲ գործիքների կիրառման փաստի (ոչ թե մտադրության, այլ հենց փաստի) մասին, այնինչ հարցմանը ներկայացված պատասխանով նշել է, թե ԱԲ գործիքներ չեն կիրառվում: Սա խնդրահարույց է մարդու՝ ինքն իր մասին, այդ թվում իր տվյալների մշակման մասին տեղեկություն ստանալու իրավունքի տեսանկյունից առնվազն այնքանով, որքանով մարդն ունի իր տվյալների մշակման եղանակների մասին տեղեկություն ստանալու իրավունք,²² իսկ տեղեկությունը պետք է լինի ամբողջական եւ հավաստի:²³

3. Պետական մարմինների կողմից կիրառվող ԱԲ գործիքները որպես կանոն ենթադրում են անձնական տվյալների մշակում (բացառությամբ Էկոնոմիկայի նախարարության նշած դեպքի):

²² Տե՛ս՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս, <https://www.arlis.am/hy/acts/183134>

²³ Տե՛ս՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 12-րդ հոդված, <https://www.arlis.am/hy/acts/175858/latest>

4. ԱԲ գործիքները կիրառվում են առանց պատշաճ իրավական հիմքի, այդ թվում՝
- նախատեսված չեն վերաբերելի օրենքներով
 - սահմանված չեն ԱԲ գործիքներով անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները,
 - նախատեսված չեն ԱԲ գործիքներով տվյալների մշակման, այդ թվում՝ որոշումների կայացման շրջանակներում անձանց իրավունքների ապահովման երաշխիքները:

Եզրակացություններ ԱԲ օրենսդրական կարգավորումների վերաբերյալ

Ըստ քաղաքականության այս փաստաթղթի հիմքում ընկած ուսումնասիրության եւ դրա՝ այս փաստաթղթով ներկայացված արդյունքների՝

1. Առկա չեն պետական մարմինների գործառույթների իրականացման, այդ թվում՝ ծառայությունների մատուցման շրջանակներում ԱԲ գործիքների կիրառման այնպիսի ընդհանուր խնդիրներ, որոնք անհրաժեշտ կլինի կարգավորել ԱԲ վերաբերյալ առանձին օրենքով: Այլ կերպ ասած՝ ***ԱԲ առանձին օրենք ընդունելու հիմանավորում, ըստ այդմ նաեւ՝ անհրաժեշտություն չկա:***
2. ԱԲ մասին առանձին օրենքի (խիստ կարգավորումների) ընդունումն առերեսույթ հակասում է նաեւ արհեստական բանականության ոլորտի զարգացման ՀՀ կառավարության քաղաքականությանը եւ տեսլականին:²⁴
3. Միաժամանակ, թեւ ուսումնասիրության արդյունքում ԱԲ մասին առանձին օրենք ընդունելու անհրաժեշտությունը չի հիմնավորվել, սակայն առկա է պետական մարմիններում ԱԲ գործիքների կիրառման կարգավորման անհրաժեշտություն վերաբերելի **ուլորտային օրենսդրությամբ** (տես՝ ԱԲ գործիքների կիրառման պրակտիկայի վերաբերյալ եզրակացությունների 3-րդ կետով արձանագրված խնդիրը):

Վերոնշյալի համատեքստում անդրադառնանք այն հարցին, թե ո՞ր դեպքում կարող է քննարկվել Հայաստանում ԱԲ վերաբերյալ առանձին օրենքը ընդունելու նպատակահարմարության հարցը: Այսպես, ԱԲ վերաբերյալ առանձին օրենքը ընդունելու նպատակահարմարության հարցը քննարկելիս անհրաժեշտ է համոզվել, որ ապահովված/իրականացված են հետեւյալ պայմանները.

²⁴ Տես՝ ԱԲ ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներին հասանելիության ապահովման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ e-draft.am/projects/9424

- **Առկա է ԱԲ կիրառումն օրենքով կարգավորելու հիմնավորում:** Օրենքը, ինչպես ցանկացած այլ նորմատիվ իրավական ակտ, պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար եւ չի կարող ընդունվել աննպատակ՝ առանց հիմնավորման:²⁵ Հետեւաբար, ԱԲ կիրառումը որեւէ կերպ կարգավորող ցանկացած օրենք նույնպես պետք է ունենա հիմնավորում: Որպես ԱԲ կիրառումը կարգավորող օրենքի անհրաժեշտության հիմնավորում կարող է հանդես գալ ԱԲ գործիքների առանձնահատկություններով պայմանավորված՝ մարդու այս կամ այն իրավունքի խախտումը բացառելու կամ իրավունքներին միջամտությունը կամ իրավունքների սահմանափակումը կամ պարտականություններ կամ պատասխանատվություն սահմանելը կարգավորելու նպատակը եւ այլն:
- **Արձանագրված խնդիրը լուծված չէ գործող օրենսդրության շրջանակներում/առկա է օրենսդրական բաց:** Երբեմն ԱԲ կիրառումը կարող է արդեն իսկ լուծված լինել գործող օրենսդրության, ընդհանուր կամ ոլորտային կարգավորումների շրջանակներում՝ անգամ եթե այդ օրենսդրությունում ուղղակիորեն նշված չէ ԱԲ մասին: Օրինակ, դեռեւս 2012 թվականին, երբ խոսք չկար ԱԲ միջոցով գեներացվող բովանդակության մասին, Վճռաբեկ դատարանը վիրավորանքի եւ զրպարտության վերաբերյալ թիվ ԵԿԴ/2293/02/10²⁶ եւ թիվ ԼԴ/0749/02/10²⁷ գործերով կայացրած իր որոշումներով արտահայտած դիրքորոշմամբ սահմանել էր, որ «հեղինակը» պետք է լինի կոնկրետ ու իրական ֆիզիկական կամ իրավաբանական անձ:²⁸ Թեւեւ Վճռաբեկ դատարանի որոշումները չեն կայացվել ԱԲ կիրառման համատեքստում, սակայն «հեղինակը»-ին տրված այս չափանիշը՝ իրական ֆիզիկական կամ իրավաբանական անձ լինելու պայմանը, այսօր լուծում է նաեւ ԱԲ կիրառմամբ գեներացվող բովանդակության հեղինակի հարցը: Այսպես, հեղինակ կհամարվի այն մարդը, ով ԱԲ միջով ստեղծել է որեւէ բովանդակություն եւ հենց այդ մարդն էլ պատասխանատու կլինի իր ստեղծած բովանդակության համար: Մեկ այլ օրինակ, ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է համակարգչային համակարգի եւ համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները (կիբեռհանցագործությունները):²⁹ Ու թեւեւ քրեական օրենսգիրքը հատուկ չի նշում ԱԲ մասին, սակայն եթե օրենսգրքով սահմանված որեւէ կիբեռհանցագործություն

²⁵ Տե՛ս՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերը, 6-րդ հոդվածի 5-րդ մասը, <https://www.arlis.am/hy/acts/187324/latest>

²⁶ Տե՛ս՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=14355223812273061

²⁷ Տե՛ս՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438187776

²⁸ Տե՛ս՝ «Վիրավորանք եւ զրպարտություն. Ձեռնարկ լրագրողների եւ փաստաբանների համար», <https://www.osce.org/sites/default/files/f/documents/2/e/123447.pdf>, էջ 42

²⁹ Տե՛ս՝ ՀՀ քրեական օրենսգիրք, գլուխ 38, <https://www.arlis.am/hy/acts/153080/latest>

իրականացվի ԱԲ կիրառմամբ, ապա միեւնույն է կհայտնվի ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորման դաշտում՝ հանգեցնելով քրեական պատասխանատվության:

- ***Արձանագրված խնդիրն/օրենսդրական բացն այնպիսին է, որ ենթակա չէ լուծման ոլորտային օրենսդրությամբ:*** Հայաստանում տարբեր իրավահարաբերություններ որպես կանոն կարգավորվում են ոլորտային օրենսդրությամբ: Օրինակ, մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի ապահովման հարցերը կարգավորվում են ի թիվս այլնի «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքով,³⁰ սոցիալական աջակցության իրավունքը կարգավորվում է ի թիվս այլնի «Սոցիալական աջակցության մասին» օրենքով³¹ եւ այլն: Արդյունքում, եթե ԱԲ կիրառման խնդիր կա առողջապահության ոլորտում, եւ առկա է այդ խնդիրն օրենսդրությամբ կարգավորելու անհրաժեշտություն, ապա տարօրինակ կլինի, եթե ԱԲ կիրառությունը կարգավորելու համար ընդունվի ԱԲ մասին առանձին ընդհանուր օրենք. այս դեպքում օրենսդրության մշակման հայաստանյան իրավական տեխնիկայից կբխի եւ ողջամիտ կլինի, եթե առողջապահության ոլորտում ԱԲ կիրառման խնդիրը/օրենսդրական բացը լուծվի հենց առողջապահության ոլորտի օրենսդրությամբ, օրինակ, «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքով: Նույնը վերաբերում է այլ ոլորտներին:

Այսպիսով, Հայաստանում ԱԲ վերաբերյալ առանձին օրենքը ընդունելու մասին վերելում բարձրացված հարցի պատասխանը հետեւյալն է. Հայաստանում ԱԲ վերաբերյալ առանձին օրենքը ընդունելու նպատակահարմարության հարցը կարող է քննարկվել, եթե **առկա է ԱԲ կիրառումն օրենքով կարգավորելու հիմնավորում՝ խնդիր, այդ խնդիրը լուծված չէ գործող օրենսդրության շրջանակներում/առկա է օրենսդրական բաց եւ արձանագրված խնդիրն/օրենսդրական բացն այնքան ընդհանուր են եւ վերաբերում են այնքան տարբեր ոլորտների, որ ենթակա են լուծման ոչ թե ոլորտային օրենսդրությամբ, այլ ԱԲ վերաբերյալ առանձին օրենքով:**

Խորհրդատվականները

Վերոնշյալ եզրահանգումների կապակցությամբ առաջարկում ենք.

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին.

³⁰ Տես՝ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենք, հոդված 1, <https://www.arlis.am/hy/acts/218390/latest>

³¹ Տես՝ «Սոցիալական աջակցության մասին» օրենք, հոդված 1, <https://www.arlis.am/hy/acts/199657>

- ուսումնասիրել պետական մարմինների կողմից կիրառվող այն ԱԲ գործիքները, որոնք օգտագործվում են անձնական տվյալների մշակման գործընթացներում՝ որպես հետեւանք ԱՏՊ մասին օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորությունների շրջանակներում ապահովելով ԱԲ գործիքների կիրառմամբ անձնական տվյալների մշակման իրավաչափությունը,
- նախաձեռնել եւ իրականացնել խորհրդատվություններ անձնական տվյալների մշակման գործընթացներում ԱԲ գործիքներ կիրառելու մտադրություն ունեցող պետական մարմինների համար ԱՏՊ օրենքով սահմանված՝ տվյալների մշակման կանոնների վերաբերյալ:

Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալությանը եւ ԲՏԱ նախարարությանը.

- ի գիտություն ընդունել պետական մարմինների կողմից ԱԲ գործիքների կիրառման խնդիրները եւ ռիսկերը.
- ✓ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի գործունեության շրջանակներում (մինչեւ այդ մարմնի ստեղծումը՝ ՀՏՀԳ մասով),
- ✓ նորարարական եւ բարձր տեխնոլոգիաների, կիրառական տեխնոլոգիաների, էլեկտրոնային ծառայությունների եւ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման եւ զարգացման եւ վերաբերելի այլ ոլորտներում կառավարության քաղաքականության մշակման եւ իրականացման շրջանակներում (ԲՏԱ նախարարության մասով):

Պետական այլ մարմիններին.

- ԱԲ գործիքների կիրառման մտադրության դեպքում իրականացնել նման գործիքների կիրառման ազդեցության գնահատում, իսկ այն դեպքերում, երբ ԱԲ գործիքների կիրառումը նախատեսվում է անձնական տվյալների մշակման գործընթացներում, լրացուցիչ իրականացնել նաեւ տվյալների պաշտպանության ազդեցության գնահատում (Data Protection Impact Assessment (DPIA)),
- * *եթե արդեն կիրառվում են ԱԲ գործիքներ, ապա ազդեցության գնահատում/տվյալների մշակման ազդեցության գնահատում իրականացնել հնարավորինս սեղմ ժամկետում,*
- ապահովել արդեն կիրառվող ԱԲ գործիքների համար պատշաճ իրավական հիմք՝ վերաբերելի օրենսդրությամբ՝ նախատեսելով
- ✓ ԱԲ կիրառումը,
- ✓ ԱԲ գործիքներով անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները,
- ✓ ԱԲ գործիքներով տվյալների մշակման, այդ թվում՝ որոշումների կայացման շրջանակներում անձանց իրավունքների ապահովման երաշխիքները,
- իրականացնել ԱԲ գործիքների կիրառում նախատեսող իրավական ակտերի նախագծերի հանրային լայն իրազեկում եւ քննարկումներ, հատկապես, եթե նման

գործիքները ենթադրում են անձնական տվյալների մշակում, այդ թվում՝ անձանց համար որեւէ կերպ իրավական հետեւանք առաջացնող որոշումների կայացում:

- ԱԲ գործիքների կիրառման դեպքում ապահովել դրա վերաբերյալ հավաստի եւ ամբողջական տեղեկության տրամադրում ինչպես պրոակտիվ՝ սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ «Տեղեկատվության ազատության մասին» և/կամ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքներով նախատեսված հարցումների հիման վրա, հատկապես, երբ ԱԲ գործիքները կիրառվում են անձնական տվյալների մշակման կոնտեքստում:

ՀՀ կառավարությանը եւ ԲՏԱ նախարարությանը

- Ապահովել եւ աջակցել, որ պետական մարմիններն իրենց գործառույթներում, այդ թվում՝ մատուցվող ծառայություններում ԱԲ գործիքներ ներդնեն միայն նման գործիքների կիրառման ազդեցության գնահատում (վերաբերելի դեպքերում՝ տվյալների պաշտպանության ազդեցության գնահատում (DPIA)) իրականացնելուց եւ ոլորտային օրենսդրությամբ ԱԲ գործիքների կիրառման պատշաճ իրավական հիմքեր ստեղծելուց հետո,
- ԱԲ մասին առանձին օրենքի ընդունման նպատակահարմարությունը քննարկել միայն այն դեպքում, երբ միաժամանակ.
- ✓ առկա է ԱԲ կիրառումը օրենսդրությամբ կարգավորելու հիմնավորում/արձանագրված խնդիր,
- ✓ պարզվել/գնահատվել է, որ արձանագրված խնդիրը լուծված չէ գործող օրենսդրության շրջանակներում եւ առկա է օրենսդրական բաց,
- ✓ պարզվել/գնահատվել է, որ արձանագրված խնդիրն/օրենսդրական բացն այնպիսին է, որ ենթակա չէ լուծման ոլորտային օրենսդրությամբ:

Հայաստանում միջազգային եւ տեղական դոնոր կազմակերպություններին, քաղաքացիական հասարակությունը

- նախատեսել միջոցներ/ծրագրեր պետական մարմինների կողմից իրենց գործառույթներում, այդ թվում՝ մատուցվող ծառայություններում ԱԲ գործիքների կիրառումը մշտադիտարկելու, խնդիրներն արձանագրելու եւ հասցեագրելու համար,
- հնարավորինս ներգրավվել պետական մարմիններում ԱԲ գործիքների կիրառում նախատեսող իրավական ակտերի նախագծերի քննարկմանը,
- հնարավորինս անդրադառնալ ԱԲ գործիքների կիրառման պրակտիկային եւ ռիսկերին բոլոր այն ծրագրերում, որոնք վերաբերում են պետական մարմինների այնպիսի գործառույթների կամ այնպիսի հանրային ծառայությունների, որոնցում կիրառվում են ԱԲ գործիքներ:

Նախարարություններ

Հ/Հ	Մարմինը	Հարցման ընթացքը	Պատասխանը
1.	Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=LS74-BCF2-3A5F-9773	Նախարարության տեղեկատվական համակարգերում ներկայումս արհեստական բանականության (AI) բաղադրիչներ չեն կիրառվում: Գործարկվող գործառույթների շրջանակում առկա են որոշ ավտոմատացված մեխանիզմներ, որոնք ձեւավորվում են նախապես սահմանված տրամաբանությունների եւ ավգորիթմների հիման վրա եւ չեն իրականացվում ինքնուրույն վերլուծական կամ որոշում կայացնող AI համակարգերի կողմից: Նշված ավտոմատացումները տեխնիկական են եւ չեն համարվում AI կիրառություն:
2.	Առողջապահության նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=MH87-1A61-19A8-CB76	Պաշտոնապես ԱԲ գործիքներ չեն կիրառում
3.	Արդարադատության նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=MJFF-FBC4-DD73-CCDF	Նախարարության եւ ենթակա մարմինների գործառույթների իրականացման, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների շրջանակներում, դիտարկվում են ԱԲ գործիքների կիրառման հնարավորությունը: Նախարարությունում ընթանում են քննարկումներ՝ ուղղված ԱԲ գործիքների կիրառման նպատակահարմարության, իրավական հիմքերի եւ տվյալների պաշտպանության պահանջների գնահատմանը: Այդ նպատակով ուսումնասիրվում են միջազգային փորձը, ինչպես նաեւ ԵՄ եւ այլ

			գործընկեր երկրների կիրառվող մոտեցումները:
4.	Արտաքին գործերի նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=FA88-FAD5-9319-4F9B	ԱԲ գործիքներ չեն կիրառում
5.	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=TR3D-BAE7-BDD4-E553	ԱԲ գործիքներ չեն կիրառում: Հայաստանում կկառուցվի մոտ 500 միլիոն դոլար արժողությամբ ԱԲ տվյալների կենտրոն: Firebird ընկերությունը NVIDIA-ի համագործակցությամբ եւ ՀՀ կառավարությունն աջակցությամբ մեկնարկել է համատեղ նախագիծ: Նախագծի շրջանակում նախատեսվում է տեղադրել հազարավոր «NVIDIA Blackwell GPU»-ներ, ձևավորել ավելի քան 100 մեգավատ հզորությամբ ենթակառուցվածք: Կենտրոնի գործարկումը նախատեսված է 2026 թվականին: 2025 թվականի հուլիսից մեկնարկել է Նախարարության ռազմավարական նախաձեռնությունը՝ «Վիրտուալ ԱԲ ինստիտուտ» (ai.gov.am), որը բաց հարթակ է նորարարության համար՝ նախատեսված միավորելու ԱԲ ոլորտի նորարարներին, տեխնոլոգիական ընկերություններին, հետազոտողներին, ՏՏ ստեղծագործողներին՝ խթանելով առաջատար հետազոտությունները, նորարարությունն ու արտադրանքի զարգացումը: Նշված նախաձեռնությունները հնարավորություն կստեղծեն պետական կառավարման համակարգում, այդ

			թվում՝ պետական գերատեսչություններում եւ դրանց ենթակայության այլ մարմիններում (եւ ոչ միայն) ԱԲ-ի ավելի լայն կիրառման համար:
6.	Էկոնոմիկայի նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=ME91-37E7-EA79-8147	Գյուղատնտեսական ոլորտի տնտեսական զարգացման միջացառումների շրջանակներում ArcGIS Enterprise միջավայրում մշակվող եւ տեղադրվող քարտեզագրական նյութերի ստեղծման գործընթացքում կիրառվում են ԱԲ եւ մեքենայական ուսուցման հիմնված՝ արբանյակային եւ անօդաչու թռչող սարքերից ստացվող բազմասպեկտրալ հանրույթների վերլուծական գործիքներ
7.	Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=ED96-5B78-75D7-8B6D	ԱԲ գործիքներ չեն կիրառում
7.1.	Լեզվի կոմիտե	_____	ԱԲ գործիքներ չեն կիրառում
8.	Ներքին գործերի նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=PL5F-D66B-4B5D-A614	ԱԲ գործիքներ չեն կիրառում
9.	Շրջակա միջավայրի նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=EP6D-FAC9-1719-18D4	ԱԲ գործիքներ չեն կիրառում
10.	Պաշտպանության նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=DE86-DD5D-BE35-3CC6	
11.	Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=TA7F-2981-EF93-C149	ԱԲ գործիքներ չեն կիրառում

	նախարարություն		
12.	Ֆինանսների նախարարություն	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=MF7B-3D22-8E6B-7EC4	ԱԲ գործիքներ չեն կիրառում

Կառավարությանը ենթակա մարմիններ

Հ/Հ	Մարմինը	Հարցման ընթացքը	Պատասխանը
1.	Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմին	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=HIB3-1AB8-AF19-E4A4	ԱԲ գործիքներ չեն կիրառում
2.	Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմին	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=BNE4-DFF7-6471-D389	ԱԲ գործիքներ չեն կիրառում
3.	Կադաստրի կոմիտե	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=CC61-8756-6A9C-5FE6	ԱԲ գործիքներ չեն կիրառում
4.	Կրթության տեսչական մարմին	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=NC2C-F7DF-9C91-148B	ԱԲ գործիքներ չեն կիրառում
5.	Միջուկային անվտանգության կոմիտե	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=IB2F-4CFD-7284-4BDA	ԱԲ գործիքներ չեն կիրառում
6.	Շուկայի վերահսկողության տեսչական մարմին	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=IB2F-4CFD-7284-4BDA	ԱԲ գործիքներ չեն կիրառում
7.	Պետական եկամուտների կոմիտե	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=SR64-CAF1-FA88-2DF5	Կիրառվում է ԱԲ տարբերով համակարգ, որը հանդիսանում է բացառապես ներքին օգտագործման գործիք եւ կիրառվում է հարկ վճարողների ռիսկայինությունը որոշելու համար

8.	Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=FS79-1353-BBDD-C13A	ԱԲ գործիքներ չեն կիրառում
9.	Վիճակագրական կոմիտե	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=NS1B-4F35-DBAB-9A33	ԱԲ գործիքներ չեն կիրառում
10.	Քաղաքաշինության կոմիտե	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=UCE4-2239-98E6-CC16	ԱԲ գործիքներ չեն կիրառում
11.	Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմին	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=UI71-73C2-956C-AC97	ԱԲ գործիքներ չեն կիրառում

Անկախ եւ ինքնավար մարմիններ

Հ/Հ	Մարմինը	Հարցման ընթացքը	Պատասխանը
1.	Մարդու իրավունքների պաշտպան	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=HRBD-AB9E-15EE-6221	ԱԲ գործիքներ չեն կիրառում
2.	Բարձրագույն դատական խորհուրդ	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=BXE4-5FFC-18B1-BD33	ԱԲ գործիքներ չեն կիրառում
3.	Կենտրոնական ընտրական հաճնաժողով	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=CE9E-A154-FE9E-54BE	ԱԲ գործիքներ չեն կիրառում
4.	Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողով	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=VHFB-2853-FA4D-7C3E	ԱԲ գործիքներ չեն կիրառում

5.	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=PSE4-6134-16EE-EE28	ԱԲ գործիքներ չեն կիրառում (պատասխանել են հետադարձ էլ նամակով՝ առանց պաշտոնական գրության)
6.	Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=TP1B-1118-8ECA-7F4B	ԱԲ գործիքներ չեն կիրառում
7.	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=CP8A-AC2D-7549-9782	ԱԲ գործիքներ չեն կիրառում, միաժամանակ, ԿԿՀ-ն նախատեսում է ինտեգրել ԱԲ գործիքներ ԿԿՀ-ի առնվազն երկու՝ նվերների հաշվառման ռեեստրի եւ հայտարարագրերի ավտոմատացված վերլուծության գործառույթներով
8.	Հաշվեքննիչ պալատ	https://e-request.am/hy/e-letter/check?trackingC%D6%85de=ASF6-B532-FC4D-85A8	ԱԲ գործիքներ չեն կիրառում
9.	Կենտրոնական բանկ	_____	